# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵՄ-ԳՀԾՁԲ-26/54 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **17 հունիսի 2026թ.**

2026թ. հունիսի 12-ից 17-ը, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ օդամղիչների տեխնիկական սպասարկման ձեռքբերման թիվ ԵՄ-ԳՀԾՁԲ-26/54 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը։

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Բեգլարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» ծառայության պետ, |
| Ա. Գրիգորյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների ծառայության» պետի տեղակալ, |
| Գ. Մնացականյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» ծառայության գծային ուղեմասի պետ, |
| Է. Խաչատրյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» ծառայության թունելային ուղեմասի պետ, |
| Ն. Ղարիբյան ՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» ծառայության աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի ինժեներ։ |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Բեգլարյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հովհաննիսյանը։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր հինգ անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված։

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին։
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին։

3. Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարությունների տեքստերը հաստատելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 12-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 17:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | BERG պտուտակային օդամղիչների տեխնիկական սպասարկում | 300,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 12-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՔՍՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2026թ. հունիսի 17-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

2. Հաստատել Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարությունների տեքստերը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Բեգլարյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Գրիգորյան

Գ. Մնացականյան

Է. Խաչատրյան

Ն. Ղարիբյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Հովհաննիսյան